




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

В
6272

20 01 11

РР
9796

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱՐԱՆ



ГОСУДАРСТВЕННАЯ
КАРТИННАЯ ГАЛЕРЕЯ
АРМЕНИИ



2013

ՀԱՅՊԵՏՏՐԱՆ – АЙ ПЕТРАТ
ԵՐԵՎԱՆ 1956 ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀԸ

Հայաստանի Պետական պատկերասրահը, Մոսկվայի ու Լենինգրադի գեղարվեստական թանգարաններից հետո, Սովետական Միության հարուստ թանգարաններից մեկն է։ Հայաստանի Պետական պատկերասրահի փաստական հիմնադրումը տեղի ունեցավ Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարում, երբ 1921 թվականին նոր կազմակերպված Հայաստանի Պետական թանգարանին կից ստեղծվեց գեղարվեստական բաժին։ Արդեն 1935 թվականին, Հայաստանի Պետական թանգարանի գեղարվեստական բաժինն այնքան ընդարձակվեց, որ հնարավոր դարձավ այն անջատել որպես ինքնուրույն թանգարան, որն սկզբում անվանվեց Հայաստանի Կերպարվեստի Պետական թանգարան, իսկ տասներկու տարի հետո՝ 1947 թվականին, վերանվանվեց Հայաստանի Պետական պատկերասրահ։

Հայաստանի Պետական թանգարանի գեղարվեստական բաժնի կազմավորման ժամանակ արդեն նախատեսվեց հավաքումների լայն պլան, որը չէր սահմանափակվում միայն հայկական արվեստի շրջանակներով։ Հավաքումների ծրագրի մեջ մտնում են ուսական ու արևմտաեվրոպական, իսկ ավելի ուշ՝ Սովետական Միության և արտասահմանյան Արևելքի արվեստի նմուշների ձեռք բերումը։ Հավաքումների նման լայն ծրագիրն այն տարիներին կարող էր անիրագործելի թվալ, մանավանդ, որ Հայաստանի Թանգարանի գեղարվեստական բաժնի սկզբնավորումն իսկ ավելի քան համեստ էր։ Վերջինս իր կազմավորման ժամանակ ոչ մի խոշոր հավաքածու չժառանգեց և փաստորեն հիմնվել էր դա-

տարկ տեղում։ Հայաստանի Թանգարանի Գեղարվեստական բաժնի հավաքածուների սկզբնական ֆոնդ ծառայեցին այն մի քանի տասնյակ նկարներն ու քանդականկարները, որ Սովետական Հայաստանի կառավարությունը ձեռք բերեց նույն 1921 թվականին Երևանում կազմակերպված հայ նկարիչների գործերի առաջին ցուցահանդեսից։ Թանգարանն ուներ համալրման մի քանի հիմնական աղբյուրներ։ Դրանցից, առաջին հերթին, պետք է հիշատակել Մոսկվայի ու Լենինգրադի կենտրոնական թանգարանների (Տրետյակովյան Պատկերասրահի, Էրմիտաժի, Ռուսական Թանգարանի) հավաքածուներից հատկացվող, ինչպես նաև Թանգարանային ֆոնդերից ու Արվեստի գործերի կոմիտեի գնման հանձնաժողովի ձեռքբերումներից ստացված համալրումները, որոնց շնորհիվ գլխավորապես հնարավոր դարձավ Հայաստանի Պետական պատկերասրահի ուսական և արևմտաեվրոպական բաժինների ստեղծումը։ Այնուհետև, պետք է նշել 1924 թ. թանգարանին հանձնված Մոսկվայի նախկին Լազարյան ձեռարանի թեև ոչ մեծաքանակ, բայց արժեքավոր հավաքածուն, որ կազմված էր գրեթե բացառապես դիմանկարներից։ Դրանց մեջ կային ուսական արվեստի այնպիսի ականավոր վարպետների գործեր, ինչպիսին են Լևիցկին, Մարտոսը, Տրոպինինը, ինչպես նաև Ալվադովսկու մի քանի նկարները։ Համալրման կարևոր աղբյուր էին Թանգարանի գեղարվեստական բաժնի ձեռքբերումները։ Ձեռքբերումներ կատարվում էին բոլոր բաժինների գծով, բայց այդ տարիներին ամենից ավելի գործեր ձեռք բերվեցին XIX դարի և XX դարի սկզբի հայկական արվեստի բաժնի



համար: Ներկայումս հիմնականում դրանցից է կազմված նոր ժամանակների հայկական արվեստի բաժինը: Բավական է ասել, որ բաժնում հավաքված են Հակոբ Հովնաթանյանի գրեթե բոլոր գործերը. Սուրենյանի, Բաշինջաղյանի, Շամշինյանի, Արծաթբանյանի գործերի զգալի մասը ձեռք է բերել թանգարանը, իսկ հետագայում՝ նրա ժառանգորդը՝ Պատկերասրահը: Մի շարք արժեքավոր գործեր ձեռք բերվեցին նաև Պատկերասրահի ուսական և արևմտահայկական բաժինների համար (Պերով — «Հուդարկավորություն», Շիշկին — «Անտառում», Վ. Վասնեցով — «Տ. Մամոնտովայի դիմանկարը», Կ. Կորովին — «Պեյզաժ», Կուրբե — «Աղջկա գլուխ», Դյուրե — «Օրենանի դքսի երեսաները», Լեոպոլդ Ռոբեր — «Հնձվորների վերադարձը Պոնտոսյան ճահճներից» և այլն):

Վերջապես, Պատկերասրահի համալրման երրորդ, բավական կարևոր, աղբյուրն են կազմում այն գործերը, որ նվիրել են մասնավոր անձինք: Այս վերջիններից նշենք մի քանի առավել արժեքավորները.

Էթիլերի հավաքածուն, որ կազմված է XIX դարի ռուս նկարիչների (Ս. Շչեդրինի, Ալվազովը և Կու, Պոլենովի և ուրիշների նկարներից), Վ. Ի. Կանանովայից ստացված ռուս նկարիչների մի քանի գործերը, որոնց մեջ աչքի են ընկնում Վ. Սեբուխի «Մ. Ն. Ալիմովայի դիմանկարը», էդ. Շամհինի մոտ 200 թերթից բաղկացած օֆորտների հավաքածուն, որ նվիրել է հեղինակը, Բուխարեստից՝ քաղաքացի Գ. Զամբաղչյանից ստացված Արևմտահայկական նկարիչների (Տ. Ռուսսո, Դիագ, Բուդեն, Մոնտիչելի, Անկետեն) գործերը: Նկարիչներ Փ. Թերլեմեզյանի և Ա. Ֆեոֆաչյանի կտակի համաձայն Պատկերասրահը ստացել է նրանց գործերի մեծ մասը: Նկարիչ Ե. Թադևոսյանի այլ-րին՝ քաղ. Ժ. Ռ. Թադևոսյանը, Պատկերասրահին է նվիրել Ե. Թադևոսյանի պեյզաժների հավաքածուն և մի քանի այլ աշխատանքներ:

Ինչ վերաբերում է սովետական ժամանակի հայ նկարիչներին, ապա վերջիններիս գործերը, որպես կանոն, ձեռք են բերվում Հայաստանի ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության կողմից:

Այս բոլորի շնորհիվ Հայաստանի Պետական պատկերասրահը դարձել է խոշոր գեղարվեստական թանգարան, որը հարուստ է հայկական, ռուսական, արևմտահայկական և այլ ժողովուրդների արվեստի շատ արժեքավոր հավաքածուներով: Ներկայումս էքսպոնատների ընդհա-

նուր քանակությունը տասներեք հազարից ավելի է: Նկարներից, քանդակներից, դժանկարներից բացի, Հայաստանի Պետական պատկերասրահն ունի նաև դանազան ժողովուրդների արվեստին պատկանող քանդականկարների և կիրառական արվեստի առարկաների (ձենապակի, արծաթից և այլ մետաղներից պատրաստված իրեր, փայտի, ոսկրի վրա փորագրություններ, գործվածքներ ու ձեռագործներ և այլն) հավաքածուներ:

Հրատարակվող «Հայաստանի Պետական պատկերասրահը» ալբոմը կազմված է 86 նկարներից, որոնք վերաբերում են հայկական, ռուսական և արևմտահայկական բաժինների գեղանկարչական գործերը: Ալբոմում գետնված 49 նկարներ հայ նկարիչների գործերն են, որ ընդգրկում են մոտավորապես հարյուր տարուց քիչ ավելի ժամանակաշրջան՝ XIX դարի քառասական թվականներից մինչև XX դարի կեսը, այսինքն՝ նոր ժամանակը և սովետահայ արվեստը: 25 նկար դրված են ռուսական և 12 նկար արևմտահայկական գեղանկարչական գործերից:

XIX դարի առաջին երեք տասնամյակներին Անդրկովկասի միացումը Ռուսաստանին, և այդպիսով հայկական բնակչության զգալի մասի ազատագրումը պարսկական ու տաճկական տիրապետության լծից, համեմատաբար բարենպաստ պայմաններ ստեղծեց հայ ժողովրդի գոյության համար և նպաստեց հայկական կուլտուրայի, մասնավորապես հայկական արվեստի վերծննդին, վերջինիս անկման երկարատև ժամանակաշրջանից հետո: Այսպիսով, 40-ական թվականները նոր ժամանակների հայկական արվեստի սկզբնավորման տարիներն են:

Հայկական արվեստի այս նոր ժամանակաշրջանի առաջին տասնամյակները կապված են երկու հայ նկարիչների՝ Հակոբ Հովնաթանյանի և Ստեփան Ներսիսյանի անունների հետ: Նրանցից առաջինը XVIII դարում և XIX դարի սկզբին նկարիչների մի քանի սերունդ տված Հովնաթանյանների ընտանիքից էր, մի նշանավոր ու ինքնատիպ նկարիչ: Աշխատելով բացառապես դիմանկարի վրա, նա իր նախորդների տրադիցիաները օրգանապես զուգակցել է նոր ռեալիստական գեղանկարչության սկզբունքների հետ: Այսպես, Ն. Թեոմյանի դիմանկարում, որ նկարչի գլուխ-գործոցներից մեկն է, թեթևակի տխուր

դեմքով երիտասարդ կնոջ կերպարում մեծ արտահայտչականությամբ հաղորդված է կանացիության հմայքը: Այս դիմանկարում, ինչպես և նկարչի վաղ շրջանի մի շարք ուրիշ աշխատանքներում, թեև գերիշխում է ռեալիստական սկզբունքը, սակայն դեռևս նկատվում են պայմանականության որոշ տարրեր, որ արտահայտվում է ֆիգուրայի հարթային մեկնաբանմամբ և աննշան ոճավորումով: Այդ գծերը չկան մյուս, ավելի ուշ նկարված՝ Շ. Նազիրյանի կանացի դիմանկարում, բայց այս դիմանկարը պակաս կենդանի է, դեմքի վրա նույնիսկ ինչ-որ սառնություն կա, որը պետք է բացատրել նրանով, որ այն, եղած տեղեկությունների համաձայն, նկարվել է մահացածից: XIX դարի կեսերին և հաջորդ երկու-երեք տասնամյակներին կատարած դիմանկարներում, որոնք պատկերում են գլխավորապես Թիֆլիսի «մոքալաքներին» (քաղաքացիներին), Հովնաթանյանը կարողացել է գտնել ոչ միայն անհատական դիմագծեր, որ հատուկ է ամեն մի կոնկրետ անձնավորության, այլև դիմանկարներում բաց անել այն կողմերը, որ բնորոշում են «մոքալաքներին» դասակարգային պատկանելությունը: Այդպիսին է Մ. Լիպարյանի դիմանկարը:

Հակոբ Հովնաթանյանին ժամանակակից մյուս նկարիչը Ստեփան Ներսիսյանն է, որն իր գեղարվեստական կրթությունն ստացել է Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում: Ներսիսյանի՝ մեզ հասած մի քանի, գլխավորապես դիմանկարային գործերը ներկայացնում են նրան որպես ակադեմիական գեղանկարչության տրադիցիաները յուրացրած լիովին գրագետ նկարիչ: Ներսիսյանը միաժամանակ մինչև այժմ մեզ հայտնի հայկական գեղանկարչության մեջ կենցաղային բովանդակությամբ ամենաառաջին նկարի («Զրոստիսնճույք Քոի ափին») հեղինակն է: Հ. Հովնաթանյանը և Ս. Ներսիսյանը տվյալ ժամանակաշրջանի ամենանշանավոր հայ նկարիչներն էին, բայց նրանք ամենեին միակը չէին: Վերջերս հայտաբերվել է նրանց ժամանակակից ևս մի նկարիչ՝ Սուքիասյանի, անունը:

Պահպանվել են բավական թվով նկարներ, որոնց հեղինակներն անհայտ են, քանի որ այն ժամանակ գոյություն ունեցող տրադիցիայի համաձայն նկարիչներն իրենց աշխատանքները չէին ստորագրում: Թեև հայկական գեղանկարչության պատմության մեջ այս ժամանակաշրջանը դեռևս բավարար չափով ռսումնասիրված չէ, սակայն

մեզ հասած աշխատանքների հիման վրա պարզ է մի բան, որ XIX դարի կեսերին և հաջորդ երկու տասնամյակներին հայկական գեղանկարչության մեջ գերիշխել է դիմանկարային ժանրը: Միայն 80-ական թվականներից են սկսում զարգանալ և մյուս՝ պատմա-կենցաղային ու, հատկապես, պեյզաժային ժանրերը:

Նախառևտրյուցիոն շրջանի հայկական արվեստի մեջ պատմական ժանրի զարգացումը կապված է Վ. Սուրենյանի անվան հետ: Լինելով բազմակողմանի նկարիչ, Սուրենյանն իրեն դրսևորեց նաև այլ բնագավառներում. նկարում էր պեյզաժներ, դիմանկարներ, թատերական նկարիչ էր, շատ է աշխատել գրքի գրաֆիկայի բնագավառում: Սուրենյանի «Ոտնահարված սրբություն» նկարը XIX դարի 90-ական թվականների կեսերին Տաճկահայաստանում տեղի ունեցող դեպքերի արձագանքն է, երբ սովետական Թյուրքիան սկսել էր հայկական բնակչության սիստեմատիկ բնաջնջումը: Սուրենյանի, ինչպես այդ, նույնպես և մյուս նկարում՝ «Շամիրամը Արա գեղեցիկի դիակի մոտ», որի սյուժետը վերցված է Հայաստանի առասպելական անցյալից, կան դրամատիկական վիճակներ: Սուրենյանի գեղարվեստական գործունեության մեջ ավելի փոքր տեղ է զբաղում բնությունը: Սակայն նկարչին է պատկանում հայկական գեղանկարչության լավագույն պեյզաժներից մեկը՝ «Հոփիսիմի վանքը», որի անվանումը այնքան էլ ճիշտ չի բացահայտում բովանդակությունը, քանի որ այստեղ գլխավորը ոչ թե հին հայկական ճարտարապետության նշանավոր հուշարձանի պատկերումն է, այլ նրան շրջապատող պեյզաժը, որը և գերիշխում է նկարում: Հայաստանի բազմազան, բուսականությամբ հարուստ բնության մեջ Սուրենյանը այդ մոտիվը չի ընտրել, այլ վերցրել է դրան ճիշտ հակադիր մոտիվ, ուր բնությունն այնքան մոռացել է, չկա բուսականության և ոչ մի հետք, ուր մերկ գետնից ու քարերից բացի ոչինչ չկա: Եվ այդ մոռացված բնությունը նա պատկերել է խոր ռեալիզմով:

XIX դարի վերջին տասնամյակներում և XX դարի առաջին երկու տասնամյակում հայկական պեյզաժային ժանրի զարգացման մեջ նշանավոր տեղը պատկանում է ամենից ավելի ժողովրդականություն վայելող հայ նկարիչներից մեկին՝ Գ. Բաշինջաղյանին: Պատկերասրահում հավաքված են նկարչի մի շարք լավագույն աշխատանքները: Վարպետորեն կատարված ոչ մեծ «Զնհալք»

Կովկաս» պեյզաժը. այստեղ, շրջապատի լեռնա-
յին պեյզաժի մեջ, մեծ էֆեկտով տրված է մայր
մտնող արևի ճառագայթների խաղը առաջին
պլանում նկարված մի քանի մերկ ծառերի բների
վրա: «Ալազանի հովիտը» պեյզաժում որևէ էֆեկ-
տավոր մոտիվ չկա: Նկարիչը վարպետորեն տվել
է դեպի հեռուն գնացող հարթավայրի պեյզաժի
պանորաման: «Արարատը և Արաքս գետը» նկա-
րում, ի տարբերություն սովորական պեյզաժների,
նկարչի ուշադրությունը կենտրոնացած է գլխավո-
րապես հովտի առաջին պլանի վրա, ուր պատ-
կերված Արաքսի կապույտ ժապավենը աշխու-
ժացված է մարդկային ֆիգուրաներով, մի բան,
որ սովորաբար բացակայում է Բաշինջաղյանի
մոտ:

Իր ոչ բազմաթիվ կենցաղային նկարներով ու
պեյզաժներով հայտնի Ա. Շամշինյանին է պատ-
կանում «Հին Թիֆլիսը» նկարը: Այստեղ արևել-
յան հին քաղաքի փողոցը, որ աշխուժացված է
անցորդների, իրենց խանութների առաջ նստած
առևտրականների ու արհեստավորների ֆիգուրա-
ներով, պատկերված է մեծ դիտողականությամբ
և ճշմարտացի վերարտադրում է հին կենցաղը:

Կենցաղային ժանրը, պեյզաժը, նատյուրմոր-
տը և, վերջապես, Անդրկովկասի բազմազգ աշ-
խատավորության՝ գյուղացիների, արհեստավոր-
ների, քաղաքային չքավորության պատկերումը՝
ահա այն թեմաները, որ զբաղեցրել են նկարիչ
Հմ. Հակոբյանին: «Վարը Արագածի լանջերին»
նկարը, որ կատարված է նախառեկոլուցիոն շրջ-
անում, պատկերում է Հայաստանի լեռնային
շրջանների գյուղացու ծանր աշխատանքը, որը
հողը մշակում է պրիմիտիվ գործիքներով: Նկա-
րիչն ամենամեծ վարպետության հասավ իր նատ-
յուրմորտներում: Նկարչի լավագույն նատյուր-
մորտներից է նրա «Մրգեր»-ը, որի մեջ հյուսիսի
պտուղները նկարված են նրանց շոշափելիության
հրապույրի իսկական զգացողությամբ:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբին հայ
նկարիչների թիվը զգալիորեն մեծանում է, բայց
միաժամանակ նրանց համար նոր դժվարություն-
ներ են ստեղծվում. նկարիչները հնարավորություն
չեն ունենում աշխատելու իրենց հայրենիքում,
որի պատճառով հայ նկարիչներից շատերը, ապ-
րելով օտարության մեջ, կտրվում են իրենց ժողով-
րդի կյանքից, հարազատ բնությունից, մարդ-
կանցից, կենցաղից, և նրանց ստեղծագործության
թեմատիկան դառնում է այն միջավայրը, ուր նը-

րանց վիճակված է ապրել: Այդ երևույթը հատկա-
նըշական է առանձնապես Թյուրքիայում ապրած
հայ նկարիչների համար և անհամեմատ պակաս
նկատելի է Անդրկովկասի հայ նկարիչների մոտ:
Սակայն այդ պատճառով առաջիններին հայկական
արվեստից անջատելու հիմք չկա: Այդ նկարիչնե-
րից ալբոմում ներկայացված են Զ. Զաքարյանը և
Վ. Մախոխյանը:

Նկարիչ Զ. Զաքարյանը, որի գեղարվեստական
գործունեությունը համարյա ամբողջովին ընթացել
է Փարիզում, հայտնի է բացառապես իր նատ-
յուրմորտներով: Ալբոմում տրված «Նատյուրմոր-
տը» պատկերում է գեղանկարչական ատրիբուտ-
ները: Զաքարյանի արվեստի մեծությունն այն է,
որ նա կարողանում է ամենասովորական, անպա-
ճուճ առարկաները նկարել այնպիսի գեղարվես-
տականությամբ, որ դիտողը դժվարանում է
կտրվել նրանից: Այդ տեսակետից նա հետևել է
այս ժանրի ամենանշանավոր նկարչի արվեստին
և ահա թե ինչու լիովին արդարացնում է իր հայ-
կական Շարդեն մականունը, ինչպես անվանում
էին նրան:

Արտասահմանյան հայ նկարիչներից մյուսը՝
Վ. Մախոխյանն է, որն իրեն նվիրել է ծովի պատ-
կերմանը: Նրա «Ծովային տեսարան»-ում հաջող
կերպով տրված է հյուսիսային ցուրտ ծովի կո-
լորիտը:

Դժվար է ասել, թե հետագայում ինչ կերպ
կդասավորվեր Խ. Տեր-Մինասյանի գեղարվեստա-
կան գործունեությունը, նկարիչ, որն ալբատել էր
Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիան, եթե նա
շատ երիտասարդ հասակում չմահանար: Մինչ
այժմ հայտնի նրա մի քանի նկարները, այդ թվում
նրա ամենանշանավոր գործը՝ «Նախիրը», վերցված
են ոչ հայկական կյանքից: Այն ներկայացնում է
մի ծանոթ պատկեր, որ հեղինակը կարծես պոկել
է իրականությունից և փոխադրել կտավի վրա: Տի-
պիկ ուսական պեյզաժում, մի ոչ մեծ բացատի
վրա, որը վերջանում է անտառով, պատկերված է
հովիտի իր կովերի նախիրով: Այս նկարում դիտո-
ղի ուշադրությունը իրենց վրա են բեկում գործիչ,
մեծ թափով, գրեթե բնական մեծությամբ, նկարված
կովերն ու հովվի ֆիգուրան, որ լցնում են հա-
մարյա ամբողջ նկարը:

Թեև XIX դարի վերջում և XX դարի սկզբնե-
րին պորտրետային ժանրը, զուտ քանակական
տեսակետից, հայկական գեղանկարչության մեջ
պակաս տեղ է գրավել, քան պեյզաժը, սակայն

այդ բնագավառում էլ մի շարք նշանակալի գոր-
ծեր են ստեղծվել նկարիչներ Ե. Նազարյանի, Ա.
Արծաթբանյանի, Ս. Աղաջանյանի, Ե. Թադևոս-
յանի կողմից (վերջին երկու նկարիչների նախա-
ռեկոլուցիոն գործերին կանգրադառնանք սովի-
տական բաժնում):

Նկարիչ Ե. Նազարյանի մինչ այժմ մեզ հայտ-
նի փոքրաթիվ դիմանկարներից աչքի են ընկնում
առանձնապես Շալամյան ամուսինների՝ պաստե-
լով կատարված դիմանկարները: Առանձնապես
ուշագրավ է տղամարդու՝ «Ս. Շալամյանի դիմա-
նկարը», որտեղ կերպարի ռեալիստական արտա-
հայտչությունը հասցված է մեծ վարպետության:

Վերը նշված նկարիչ Ա. Արծաթբանյանը, դի-
մանկարներից բացի, հայտնի է նաև իր կենցաղա-
յին ժանրի նկարներով՝ «Թաղում», «Հիվանդ երե-
խայի մոտ», որոնք ունեն պարզ, բայց անմիջա-
պես կյանքից վերցված սյուժետներ: Այս ոչ մեծ
և ճշմարտացի նկարները շատ բանով և, հատ-
կապես, գեղարվեստական ուղղվածությամբ մոտ
են այնպիսի առաջավոր ռեալիստ նկարիչների,
ինչպիսին էին ուսական արվեստում «շրջիկ-
ները»:

Ալբոմի զգալի մասը՝ մեկ երրորդը, հատկաց-
ված է հայկական սովետական նկարիչների աշ-
խատանքներին: Հայկական սովետական նկարիչ-
ների գործերում արտացոլված են սովետական
մարդկանց՝ բանվորների, գյուղացիների, ինտելի-
գենցիայի պայքարը սոցիալիզմի կառուցման,
երկրի ինդուստրացման համար, արտահայտված
է սովետական մարդկանց հայրենասիրությունը:
Սովետական նկարիչների նկարներն ու դիմանք-
կարները ցույց են տալիս սովետական նոր մարդ-
կանց, մեր սովետական հասարակության լավա-
գույն գործիչների կերպարները: Պեյզաժներում
դրսևորվում է հայ նկարիչների սերը դեպի հարա-
զատ բնությունը:

Հայաստանի կերպարվեստագետների ավագ
սերնդի գործունեությունը մասամբ ընթացել է
նախառեկոլուցիոն տարիներին, իսկ մնացած
սերունդներն իրենց գեղարվեստական գործունեու-
թյամբ ամբողջովին կապված են սովետական
էպոխայի հետ:

Ալբոմում տրված են հայկական սովետական
նկարիչների մի շարք լավագույն աշխատանքնե-
րը, որ պատկանում են նկարիչների տարբեր սե-
րունդներին:

Սովետահայ նկարիչների ավագ սերնդի հա-

մար հատկանշական են պեյզաժն ու դիմանկարը:

Մեծ հուզականությամբ ու գեղանկարչական
բարձր կուլտուրայով է բնորոշ նախառեկոլուցիոն
և սովետական շրջանի հայ խոշոր նկարիչներից
մեկի՝ արվեստի վաստակավոր գործիչ Ե. Թադե-
վոսյանի ստեղծագործությունը: Նկարչի արվեստի
այս գծերը կարելի է տեսնել արդեն նրա ստեղ-
ծագործության վաղ, նախառեկոլուցիոն շրջանում
կատարված «Ռ. Մ. Սուրենյանի դիմանկար»-ում,
ուր մեծ կենսականությամբ ու հմայքով է տրված
երիտասարդ կնոջ կերպարը: Թադևոսյանի ստեղ-
ծագործության մեջ մեծ տեղ է գրավում պեյզաժը:
Թադևոսյանը հայաստանի բազմազան բնության
ամենախորթափանց պատկերողներից մեկն է:
Նրա բազմաթիվ, բայց փոքր պեյզաժները կա-
տարված են մեծ վարպետությամբ: Թադևոսյանի
համեմատաբար խոշոր պեյզաժներից, որ նրա
մոտ շատ քիչ են, աչքի է ընկնում «Արագածը»,
որտեղ նկարչին հատուկ կոլորիտի նուրբ զգացո-
ղությամբ են տրված դաշտերի վառ կանաչը, էջ-
միածնի վանքի աղյուսե կարմրավուն պատերը,
մանուշակագույն լեռնալանջերը և, վերջապես,
լեռան ձյունե բարձունքներն ու գորշ ամպամած
երկինքը: Նկարչի մյուս՝ ամենամեծ պեյզաժում,
որ կոչվում է «Մեր փողոցը Վաղարշապատում»,
պատկերված է հին արևելյան քաղաքը, ամառա-
յին մի օր, արևամուտից առաջ: Փոքրիկ տնակ-
ների և կավածեփ, խուլ պատերի երկայնությամբ
նեղ փողոցով քայլում են չադրա գցած երկու կին,
տներից մեկի շեմքին նստած է մտածոճուճի մեջ
ընկած մի ծերուկ: Նկարիչը շատ խորը զգացել և
հաղորդել է մեռնող հին կենցաղի ու մանտիկան:

Նախառեկոլուցիոն շրջանի հայ նշանավոր
ռեալիստ նկարիչ է ժողովրդական նկարիչ Փ.
Թերլեմեզյանը: Լինելով գերազանցապես պեյզա-
ժիստ, Թերլեմեզյանն ունի նաև ուրիշ ժանրի
գործեր: «Լոռեցի հովիվը» նկարչի վաղ աշխա-
տանքներից է: Այս նկարը, թեև գույնով դեռ փոքր
ինչ պայմանական է, գրավում է պատանի հովվի
կերպարի ճշմարտացիությամբ: Գույնի այդ պայ-
մանականությունը չկա ավելի ուշ շրջանում կա-
տարված «Կոմիտաս» աշխատանքում, որտեղ
դիմանկարը տրված է պեյզաժի ֆոնի վրա: Նկար-
չի լավագույն ռեալիստական պեյզաժներից է
«Վանա լիճը և Սիփան սարը Կոտուց կղզուց»:

Ժողովրդական նկարիչ Ս. Աղաջանյանի դի-
մանկարային ժառանգությունը նախասովետական
և սովետական շրջանի հայկական գեղանկարչու-

թյան ամենամեծ նվաճումներից է: «Հոր դիմա-
նկար»-ում, որ կատարված է դեռ մի փոքր զուսպ
և մուժ կոտրիտով, ռեսալիստական մեծ համոզու-
թյամբ է նկարված պարզ, համեստ աշխատավո-
րին բնորոշ դեմքը: Նկարչի ամենափայլուն գոր-
ծերից մեկը՝ «Վ. Ս. Գասպարյանի դիմանկարը»,
աչքի է ընկնում կատարման նյութականության,
գույների հագեցվածությամբ: «Ինքնադիմանկար»-ի
մեջ, որ նկարչի վերջին, սովետական շրջանի
գործերից է, նրա ուշադրությունը կենտրոնացված
է կերպարի բնութագրի արտահայտչության վրա,
որը կատարված է Աղաջանյանին հատուկ տեմ-
պերամենտով:

Արվեստի վաստակավոր գործիչ Վ. Ախիկյանը
իր «Դեղձեր» նատյուրմորտում հասել է պատկեր-
ման մեծ նյութականության:

Հայկական սովետական գեղանկարչության
մեջ լիրիկական պեյզաժի տրադիցիաների շարու-
նակողն էր արվեստի վաստակավոր գործիչ, նը-
կարիչ Ս. Առաքելյանը: Այդպիսի աշխատանքնե-
րից են նրա «Հին շուկան Երևանում» պեյզաժ-
նկարը և փոքր, բայց շատ նուրբ գեղանկարչու-
թյամբ կատարված «Երևանի շրջակայքը» էտյուդը:
Պեյզաժների հետ միասին Առաքելյանը մեծ ուշա-
դրություն էր դարձնում թեմատիկ-կոմպոզիցիոն
նկարներին. այդ նկարներում նա արձագանքում
էր այն նորին, որ մտել է սովետական մարդկանց
կյանքի մեջ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի
հետևանքով: Այս վերջիններից է «Կոլտուրան
դեպի լեռները» նկարը, որ պատկերվում է գրեթե
բոլոր, դասագրքերով, ուսումնական պիտույքներով
բարձված ուղտերի քարավան, որը լեռնային
արահետով շարժվում է դեպի հեռավոր, խուլ
գյուղերից մեկը: Թեմայով օրգինալ այս նկարում
նույնպես նկարիչն իրեն դրսևորել է որպես հիա-
նալի գեղանկարիչ:

Նախառևոյուցիոն և սովետական շրջանի
ականավոր հայ նկարիչ, ժողովրդական նկարիչ
Մ. Սարյանը ալբոմում ներկայացված է մի քանի
աշխատանքներով. որ ցույց են տալիս նրա ստեղ-
ծագործության հիմնական տեսակները՝ դիմանը-
կար, պեյզաժ, նատյուրմորտ: Սարյանի «Ինքնա-
դիմանկար»-ը նկարչի ամենախորը պատկերված
դիմանկարներից մեկն է: Այս դիմանկարում, որ
նկարիչը կատարել է Հայրենական Մեծ պատե-
րազմի տարիներին, արտացոլվել են նրա հոգե-
կան վիճակն ու ապրումները: Դիմանկարում ար-
տահայտվել է նաև այն խստությունը, ամուր

կամքն ու աննկունությունը հայրենիքի պաշտպա-
նության համար, որ բնորոշ էին սովետական
մարդկանց՝ մեծ փորձությունների այդ տարիներ-
ին: Նկարչի ստեղծագործության մեջ ամենա-
հիմնականը պեյզաժն է: Սարյանի պեյզաժներին
բնորոշ կենսուրախությունը, լույսով և գույնով
հագեցվածությունը իրենց արտահայտությունն են
գտել նկարչի լավագույն գործերից մեկում՝
«Արարատը զարնանը» աշխատանքում: Նկարչի մի
այլ՝ «Կեսօրը» պեյզաժում, որը նույնպես պատ-
կերում է Արարատը, բայց արդեն ոչ թե զարնանը,
ինչպես նախորդ նկարում, այլ ամառային մի օր,
նկարչի արվեստին մշտապես հատուկ վերը նշված
գծերի հետ միասին, կարելի է տեսնել և Սարյա-
նին բնորոշ մի այլ առանձնահատկություն՝ բնու-
թյան անսահման բազմազանությունն ընկալելու
ընդունակությունը: «Կեսօր» նկարում նկարչին հա-
ջողվել է պատկերել հովտի պեյզաժն ու Արարատը
ամառային կեսօրին, երբ դրանք կարծես պատած
են գոլորշիացումներով հագեցած մթնոլորտի թե-
թև մշուշով: Սարյանի աշխատանքներում նշանա-
կալի տեղ է գրավում ծաղիկների, մրգերի պատկե-
րումը: «Մրգերը» նատյուրմորտում նկարիչը վառ
մրգերի պատկերման զուտ գեղանկարչական խըն-
դիրների հետ միասին պատկերում է նաև մրգերի
այլ հատկությունները՝ դեղձերի թավշյունը,
խաղողի հյութեղությունը:

Ժողովրդական նկարիչ Հ. Կոչոյանը ներկա-
յացված է երկու գործերով. նրանցից մեկը՝
«Թավրիզի ճաշարանում», արտացոլում է նկարչի
ստեղծագործության վաղ շրջանին հատկանշական
հակումը դեպի գրոտեսկը: «Աշունը Երևանում»
լիրիկական մեծ զգացումով կատարված փոքրիկ
պեյզաժ է:

Հայկական սովետական արվեստի աչքի ընկ-
նող ներկայացուցիչներից մեկը՝ Ժողովրդական
նկարիչ Գ. Գյուրջյանը, երեսուն տարուց ավելի,
իրեն նվիրել է Հայաստանի բնության պատկեր-
մանը: Գյուրջյանի ստեղծագործությունն ալբոմում
ներկայացված է տարբեր մոտիվների երեք պեյ-
զաժներով: «Այրիվանքի բլուրները» պեյզաժում
տրված է բարձր լեռնային վայրերի բնության
խստությունը: «Բլուր Ղոշաբուլաղում» նկարում
շատ տիպիկ է տրված Հայաստանի արևից այր-
ված պեյզաժը, որը տեղ-տեղ ընդհատվում է
մուգ-կանաչ թփուտներով: Այլ զգացումներով է
համակված «Աղատ գետի ձորը» պեյզաժը, որ-
տեղ դահլիճ գետակի կարկաչունով աշխուժա-

ցած փարթամ բնությունը լիրիկական տրամա-
դրություն է ստեղծում: «Հայկական պեյզաժ» նկա-
րը կարծես հայկական լեռնային լանդշաֆտի մի
սինթեզ է, ուր պատկերված են կանաչ լեռները,
որոնք տեղ-տեղ վեր են ածվում զառիթափների,
տեղ-տեղ էլ աստիճանաձև իջնում խոր կիրճերը,
որոնց հատակում փոթորկում է աղմկոտ գետը:
Գյուրջյանի «Հայկական պեյզաժը» նկարչի երկար
տարիների աշխատանքի արդյունքն է:

Սովետահայ նկարիչները նշանակալի հաջո-
ղությունների են հասել թեմատիկ-կոմպոզիցիոն
նկարների ստեղծման բնագավառում, որ կատար-
վել են Հայրենական Մեծ պատերազմի և հատկա-
պես հետպատերազմյան տարիներին:

ՌՍՖՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Դ.
Նալբանդյանի «Գնդապետ Ա. Գ. Զաքարյանի վեր-
ջին հրամանը» նկարը Հայրենական Մեծ պատե-
րազմին վերաբերող ամենահաջող գործերից մեկն
է: Արտահայտիչ և ճշմարտացի կերպով են տրե-
ված ինչպես հերոս հրամանատարի առնական
կերպարը, այնպես էլ նրան շրջապատող մար-
տիկների կերպարները:

Պատմական-ռևոլյուցիոն թեմատիկան նշա-
նակալի տեղ է գրավում հայ սովետական նկա-
րիչների գործերում: Նկարիչ Ա. Բեքարյանը «XI
բանակի մոտքը Երևան 1920 թվականին» նկա-
րում կարողացել է հաղորդել ուրախության այն
հուզիչ զգացումները, որով համակված է սովետա-
կան մարտիկներին դիմավորող քաղաքի բնակչու-
թյունը: Արվեստի վաստակավոր գործիչ Հ. Զար-
դարյանի «Նախաշավիղ» նկարը նշանակալի գործ
է հայ մեծ գրող Խաչատուր Աբովյանի մասին:
Նկարիչը գտել է թեմայի հիմնալի լուծում, որը
ճիշտ է արտացոլում ականավոր հայրենասեր լու-
սավորչի գործունեությունը: Հաջող է լուծված
Աբովյանի կերպարը, մեծ հմայքով է տրված նրա
պատանի աշակերտը՝ գուլագի տղան, որը լի է
հավատով դեպի իր ուսուցչի խոսքը: Նրանք եր-
կուսն էլ, հավատով դեպի իրենց հայրենիքի լու-
սավոր ապագան, Արարատի լանջից նայում են
հյուսիս՝ Ռուսաստանի կողմը, որտեղից, հավա-
տում էր Աբովյանը, պետք է գար իր ժողովրդի
ազատագրումը:

Կենցաղային թեման սովետական հասարակ
մարդկանց կյանքի մասին երևան է հանված նկա-
րիչ Ա. Բեքարյանի «Օրորոցի մոտ» նկարում, որ-
տեղ նկարչին առանձնապես հաջողվել է երիտա-
սարդ կնոջ-մոր հմայիչ կերպարը: Մտահղաց-

մամբ արտասովոր է, բայց շատ տիպական է և
ճշմարտացի նկարիչ Ա. Պապյանի «Մեկնում են
ուսման» նկարը, որ նվիրված է սովետական երի-
տասարդությանը. նկարը պատկերում է գնացքում
մի խումբ երիտասարդների՝ Մոսկվային մոտե-
նալիս:

Պեյզաժն ու դիմանկարը մեծ տեղ են գրավել
ոչ միայն սովետահայ նկարիչների ավագ սերնդի,
այլև հաջորդ սերունդների նկարիչների աշխա-
տանքներում: Այդ նկարիչների պեյզաժային աշ-
խատանքներից պետք է նշել արվեստի վաստա-
կավոր գործիչ Մ. Աբեղյանի «Պեյզաժ»-ը, որ-
տեղ այգիների վառ կանաչի և կամորջի հին ճար-
տարապետության գուգակցությունը հետաքրքր
մոտիվ է ստեղծում, արվեստի վաստակավոր գոր-
ծիչ Խ. Սասյանի «Երևան: Վ. Ի. Լենինի անվան
հրապարակը» պեյզաժը, որը պատկերում է ռես-
պուբլիկայի վերաշինվող մայրաքաղաքի ամենա-
գեղեցիկ կոտորներից մեկը:

Վերջին տարիների ընթացքում կատարված
դիմանկարային գործերից իր նուրբ գեղանկար-
չությամբ աչքի է ընկնում նկարիչ Ծ. Սավայանի
«Կոլտնեստեհի Լուսաբեր Ղազարյանի դիմանկա-
րը»: Նկարիչ Ա. Զիլինգարյանը կոմպոզիտոր Հա-
րո Ստեփանյանի դիմանկարում ստեղծել է ճշը-
մարիտ և համոզիչ կերպար: Հով. Զարդարյանը
«Սևանգէսի բանվորներ Թովմասյանն ու Մեղուլը»
աշխատանքում իր առջև խնդիր է դրել պատկե-
րել ոչ միայն սովետական նոր մարդկանց հերո-
սական կեպարները, այլև բացահայտել նրանց
հատկանշական մի այլ գիծ՝ Սովետական Միու-
թյան ժողովուրդների անխախտ բարեկամությունը:



XVIII դարի ռուսական արվեստը, ինչպես
հայտնի է, ամենից ավելի մեծ նվաճումներ ունե-
ցավ դիմանկարների ասպարեզում: Պատկերա-
սրահն ունի XVIII դարի երկրորդ կեսի բոլոր երեք
նշանավոր դիմանկարիչների՝ Ռուկոտովի, Լեիցկու
և Բարովիկովսկու գործերը: Վերջին երկուսը ներ-
կայացված են ոչ թե մեկ, այլ մի քանի դիմանկա-
րային գործերով:

Ռուսական արվեստը դիմանկարի և պեյզաժի
ասպարեզում նշանակալի նվաճումներ է ունեցել
նաև XIX դարի առաջին կեսում: Պատկերասրահում
մեկական, երեքմեկ երկուսական գործերով են
ներկայացված այդ շրջանի դիմանկարի և պեյ-

զաժի բնագավառում աշխատող լավագույն նկարիչները:

XIX դարի առաջին կեսի դիմանկարիչներին, նրանց նախորդներին՝ XVIII դարի վերջի դիմանկարիչներին, ընդամենը մեկ-երկու սերունդ է բաժանում, բայց դիմանկարային արվեստի բնույթը նոր դարում էապես տարբեր է: XVIII դարի դիմանկարներին բնորոշ հանդիսավորությունը, կեցվածքի, շարժումների պայմանականությունը այս շրջանում փոխվում են պարզության, բնականության, անբռնադրոսիկության: XIX դարի առաջին տասնամյակներին խոշորագույն դիմանկարիչ Օ. Կիպրենսկուն է պատկանում «Դ. Ն. Ֆիլոսոֆովի դիմանկարը»: Ճշմարտացի է տրված երիտասարդի անժամանակ թորշուրած դեմքը: Կիպրենսկին միաժամանակ նրան օժտել է էպոխային և, հատկապես, իր դիմանկարներին բնորոշ բովանդակ հուզականության գծերով: Դիմանկարի գեղանկարչությունն աչքի է ընկնում դեմքի ջերմ, ոսկեգույն կոլորիտով, որն ավելի նուրբ երանգ է ստանում, ավելի որոշակի նկարագծվում է սև սերթով և կարմիր գույներով մուգ-կանաչ շարժով:

Կիպրենսկու ժամանակակից, խոշոր դիմանկարիչ Վ. Տրոպինին է պատկանում «Հ. Ն. Լազարևի դիմանկարը»: Այս դիմանկարում առանձնապես պարզորոշ է երևում դիմանկարային ժանրում տեղի ունեցած վերը նշված էվոլյուցիան: Չնայած Հ. Ն. Լազարևի դիմանկարի պարզ-տոնական նպատակադրմանը (այն նկարվել էր Լազարևի հիմնադրած Լազարյան ճեմարանի հանդիսասարահի զարդարման համար), նկարում բոլորովին բացակայում է այն հանդիսավորությունը, որ պարտադիր էր առաջ, մանավանդ նման դիմանկարներում: Նկարիչը մեծ պարզության ու ռեալիստորեն է պատկերել այդ ծերունական կերպարանքը, կնճռոտ դեմքը, ապակենման աչքերը, ոչնչով չգեղեցկացնելով իր մոդելը:

Ռուս գյուղացու կյանքը առաջին անգամ լայնորեն պատկերել է Վենեցիանովը: Ժողովրդի կյանքին անդրադարձնալը, որ վկայում է նկարչի ռեալիստական ձգտումների մասին, այնուամենայնիվ գերծ չէր որոշ իդեալականացումից և սենտիմենտալությունից: Այդ տեսակետից տիպական է նկարչի մի փոքրիկ էտյուդը՝ «Գեղջիկուհի»-ն, որ անկասկած նկարված է նատուրալից:

Իրական կյանքի ռեալիստական արտացոլումը

հատկանշական է այդ ժամանակի նաև պեյզաժային գեղանկարչությանը: XIX դարի առաջին տասնամյակների ամենախոշոր պեյզաժիստը Սիլվեստր Ելեգրինն էր, որի ոչ երկարատև գեղարվեստական գործունեությունը ամբողջովին կապված է Հոմերի, Նեապոլի և նրանց շրջակայքի պատկերման հետ: Անմիջապես նատուրալից նկարված բնության այս «դիմանկարներ»-ում նկարիչը աստիճանաբար ազատագրվում է իր վաղ շրջանի պեյզաժների որոշ պայմանականությունից, հետագայում կանգնելով ռեալիստական գեղանկարչության ուղու վրա: «Սբ. Անդելի ամրոցը Հոմերում» պեյզաժը նկարչի դեռևս անցումային բնույթի աշխատանքներից է: Այսպես, գույնի որոշ պայմանականություն պահպանվել է աջ ափի մուգ-դարչնագույն ստվեքներում և առաջին պլանում նկարված շենքերում: Ինչպես միշտ, այս նկարում էլ Ս. Ելեգրինի մոտ պեյզաժը աշխուժացված է մանր ֆիգուրաներով:

«Պոմպեի վերջին օրը» նկարի նշանավոր հեղինակ Կ. Պ. Բրյուլովի ստեղծագործությունը պատկերասրահում ներկայացված է երկու դիմանկարով և գծանկարներով: «Մ. Ա. Բեկի դիմանկար»-ում, ինչպես և մյուս կանացի դիմանկարներում, Բրյուլովը տվել է ոչ այնքան տվյալ անձնավորության կոնկրետ պատկերը, որքան այն ժամանակի աշխարհիկ կնոջ ընդհանրացված կերպարը:

Ազգությամբ հայ ականավոր ծովանկարիչ Ի. Կ. Ալվազովսկու աշխատանքները պատկերասրահում գրավում են մի ամբողջ դահլիճ և լավ ներկայացնում են նկարչին: «Նեապոլի ծովածոցը. մառախլապատ առավոտ» մեծ նկարում նկարիչը վարպետորեն է լուծել խոնավության հագեցած օդի մթնոլորտում ավելի ու ավելի սուղվող ծովածոցի և մերձափնյա պեյզաժի պատկերման խնդիրը: Մեծ էֆեկտով են տրված ծագող արևի շողերով լուսավորված նավերի առաջատեսները: Մյուս, ավելի մեծ չափի նկարում, որ կոչվում է «Անդորրություն», Ալվազովսկու ավելի ուշ շրջանի ստեղծագործություններից է, ծերունի նկարիչը զարմանալի վարպետությամբ է պատկերում ծովի և երկնքի անսահմանությունը, ամպերի թեթևությունը, լույսի խաղի էֆեկտը ջրի վրա:

XIX դարի երկրորդ կեսը, որ կապված է զբոսավորապես «Նկարչական Շրջիկ Ցուցահանդեսների Ընկերության» գործունեության հետ, պատկերասրահում ներկայացված է բավական թվով

աշխատանքներով, սակայն դրանցից բոլորը չեն, որ տիպական են այդ նկարիչների ստեղծագործության համար: Շրջիկները («передвижники») Բելինսկու, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու երկերով դաստիարակված առաջավոր ռուս ռեալիստ նկարիչներ էին, որ իրենց մերկացնող ստեղծագործություններում արտացոլում էին հետոնեֆորմյան Ռուսաստանի կյանքի բացասական կողմերը, ստեղծում ճշմարտացի նկարներ ռուս ժողովրդի կյանքից:

«Շրջիկներ» համար հատկանշական փոքրաթիվ աշխատանքներից է Վ. Պերովի լավագույն նկարներից մեկը՝ «Հուզարկավորությունը»-ը, որը մեծ հռչակ է վայելում: Այս աշխատանքում, որ բովանդակությամբ նման է Նեկրասովի «Սառնամանիք-արքան» պոեմին, նկարիչը ճշմարտացի և սրտաշարժ կերպով է պատկերում ընտանիք կերակրողին, աշխատավորին կորցրած գյուղացու ընտանիքի անկեղծ և լուռ վիշտը:

Եթե «Շրջիկներ»-ի վաղ շրջանին՝ XIX դարի 70—80-ական թվականներին, պատկանող ժանրային գործերում գերակշռում էին մերկացնող բնույթի նկարները, ինչպես նաև գյուղացիների ծանր կյանքը պատկերող սյուժետները, ապա ավելի ուշ սկսում են գերակշռել այնպիսի թեմաներ, որ պակաս հատկանշական են այն ժամանակվա ինչպես գյուղացիության, այնպես էլ իշխող դասակարգերի կյանքի համար: Այդպիսի առաջին գործերից է Ա. Կորոլևիսի՝ սյուժետով ոչ պահանջախնդիր, բայց իր ճշմարտացի արտացոլմամբ հռչակված «Թռչունների թռչումները» նկարը, որտեղ պատկերված են երկու գյուղացի տղաներ անտառում թռչուններ որսալիս:

Ուշ շրջանի «շրջիկության» սյուժետների երկրորդ խմբի համար հատկապես բնորոշ են Վ. Մակովսկու նկարները: Իր ժանրային նկարներում նկարիչը հանդես է բերել մեծ դիտողականություն, որը սակայն չի սահմանափակվել միայն ճիշտ գտնված կերպարներով: Մակովսկուն հատկանշական են նաև նրա նկարներում կերպարների համար դիպուկ գտնված դրեքներ ու ժեստերը, որի շնորհիվ և բացահայտվում է նկարի սյուժետը: Այդպիսի տիպիկ և բացատրություն չպահանջող աշխատանք է Վ. Մակովսկու «Թատրոնում» նկարը: Պարզ է ոչ միայն այն, ինչը հետաքրքրում է հասակն առած երկու տղամարդկանց, որ անտրակտի ժամանակ կանգնած են պարտերում՝ երեսով դեպի հանդիսասրահը, այլև

նրանց փոխհարաբերությունը, որոնցից մեկը բինոկլով ուշադիր զննում է, իսկ մյուսը պատրաստակամ, ստորաբարշտրեն թեքված դեպի առաջինը նրան ինչ-որ բան է հաղորդում:

XIX դարի երկրորդ կեսի ռուսական գեղանկարչության մեջ զգալի տեղ է բռնում նաև պեյզաժը: Պատկերասրահն ունի այդ ժամանակաշրջանի բոլոր հայտնի պեյզաժիստների գործերից, սակայն միայն Ի. Ելեգրինն է նեկայացված այստեղ բավականաչափ լրիվ: Ելեգրինի «Անտառում» պեյզաժը, որ նկարչի վաղ շրջանի աշխատանքներից է՝ կատարված արտասահմանյան գործողման ժամանակ, պատկերում է Յյուրիխի շրջակայքի անտառը. արտասովոր վարպետությամբ, թարմ և էպիկական թափով է տրված հին անտառի խորքը՝ ծառերի դարավոր բներով, որոնց սաղարթի միջով թափանցում են արևի շողերը:

Գաղափարական ուղղությամբ «շրջիկներին» մոտ կանգնած առաջավոր ռուս նկարիչներից է Վ. Վերեշչագինը: Իր թյուրքեստանյան և բալկանյան ռազմանկարների մեջ նկարիչը համարձակորեն դուրս է գալիս որպես պատերազմի հակառակորդ: 1812 թվականի Հայրենական պատերազմին նվիրված գործերի սերիայի լավագույն նկարներից մեկում՝ «Նապոլեոնի վերադարձը Կրեմլ Պետրոսի պալատից», զգացվում է և մի ուրիշ բան՝ հայրենասիրություն, հայրենիքի պաշտպանությունը օտարերկրյա զավթիչներից:

Արևելքն իր բնության, կենցաղի, ճարտարապետության յուրահատկությամբ հրապուրել է որոշ ռուս նկարիչների: Վերջիններից էր նաև Կ. Մակովսկին: Իր ամենալավ նկարներից մեկում՝ «Սրբազան գորգի փոխադրումը Մեքքայից Կահիրե» նկարիչը պատկերել է արաբների գույնը գույն, վառ, արևով ողողված թափորը, որ դանդաղ շարժվում է Կահիրեի փողոցներից մեկով, օդիդինալ, արտասովոր ճարտարապետության ֆոնի վրա:

XIX դարի երկրորդ կեսի ականավոր ռուս նկարիչներ Ռեպինն ու Սուրիկովը ներկայացված են յուրաքանչյուրը մի քանի աշխատանքներով, որոնք սակայն հնարավորություն են տալիս դատելու այդ ռուս մեծ նկարիչների բազմակողմանի ու բարձր արվեստի մի քանի կողմերի մասին միայն: Ռեպինի «Երկհանգրվան» աչքի է ընկնում նախ և առաջ իր փայլուն գեղանկարչությամբ: Սուրիկովի «Կազակի գլուխը», որ կատարված է

նկարչին հատուկ մեծ արտահայտչությունը, մի էություն է նրա հռչակավոր «Սիբիրի նվաճումը» նկարի համար:

Պատկերասրահում ավելի լրիվ պատկերացում կարելի է ստանալ Վ. Պոլենովի մասին, որի մի շարք պեյզաժային էությունները կազմում են նկարչի գործունեության առավել կարևոր բնագավառը: «Բակ: Բուդարիա» էությունը նկարչի լավագույն էությունային պեյզաժներից մեկն է, որ կատարված է մեծ անկեղծությամբ:

Դիմանկարը տիպական չէ Վ. Վասնեցովի ստեղծագործության համար, սակայն «Տ. Ա. Մամոնտովայի դիմանկար»-ում նկարչի ստեղծած երիտասարդ ռուս աղջկա հմայիչ կերպարը, ինչպես նաև այս գործի գեղանկարչական բարձր որակը թույլ են տալիս վերջինս դասելու նկարչի նշանավոր գործերի շարքին:

Ռուսական բնության բանաստեղծականությունը, որ կեիտանը այնքան նրբորեն զգացել է և հաղորդել նույնիսկ ամենափոքր պեյզաժներում, պատկերված է թախծալի տրամադրությամբ համակված նրա «Նավակը գետափին» էությունում:

Պատկերասրահն ունի ռուս ականավոր դիմանկարիչ Վ. Ա. Սերովի գլուխ գործոց աշխատանքներից մեկը՝ «Մ. Ն. Ակիմովայի դիմանկարը», որտեղ երիտասարդ կնոջ նուրբ կերպարի մեծ կենսականությունն առ արտահայտչությունը, որ այնքան խորն զգացել է նկարիչը, զուգակցված է փայլուն գեղանկարչության:

Կ. Ա. Կորովինի «Մառան» պեյզաժը պատկանում է նկարչի վաղ, ռեալիստական շրջանի գործերին, այն աչքի է ընկնում իր արտասովոր գեղանկարչությամբ, երբ նկարիչը գույնի տեսակետից շատ զուսպ պալիտրայով կարողացել է ստեղծել զարմանալի հարուստ կոլորիտ:

Ռուսական սովետական արվեստի բաժինը մեծ չէ պատկերասրահում և այնտեղ արտացոլում չեն գտել սովետական կերպարվեստի շատ կողմերը, հատկապես, այսպես կոչված, թեմատիկ նկարները, որոնք ամենից ավելի են արտահայտում սովետական արվեստի՝ որպես սոցիալիստական արվեստի, ուղղությունը: Պատկերասրահում չկան մի քանի խոշոր վարպետների գործերից: Սակայն, չնայած այս էական բացերին, ռուսական սովետական արվեստի բաժինն ունի սովետական մի քանի խոշոր նկարիչների գործեր:

Սովետական նկարիչների հնագույն սերնդին է պատկանում Մ. Վ. Նեստերովը: Սովետական տա-

րիներին Նեստերովը նկարել է մեծ քանակությամբ դիմանկարներ: «Նկարչի որդու դիմանկարը» թարմ և գեղանկարչորեն կատարված դիմանկար էություն է և զուրկ չէ նկարչի լավագույն դիմանկարներին հատուկ սուր հոգեբանական արտահայտչությունից:

Սովետական նկարիչների այս հին սերնդին է պատկանում նաև ՌՍՖՍՌ ժողովրդական նկարիչ Ն. Ն. Լանսերեն: Սովետական շրջանում մի շարք տարիներ ապրելով Անդրկովկասում, նկարիչը շատ է ճանապարհորդել Վրաստան, Հյուսիսային Կովկաս և Հայաստան: Նրա կենցաղային, ազգագրական աշխատանքները, որ այդ ճանապարհորդությունների արդյունքն են, նախ և առաջ ունեն մեծ գեղարվեստական արժեք: Պատկերասրահում գտնվող Զանգեզուրի ու Լեռնային Ղարաբաղի սերիայի գործերից առանձնապես աչքի է ընկնում «Հին տուն (ղարաղամ) Գորիսում» գործը, որտեղ վարպետորեն պատկերել է այն տարիներին Հայաստանի հեռավոր շրջաններում դեռևս պահպանված հին տան ներսի մասը:

«Ակադեմիկոս Կ. Ի. Սկրյաբինի դիմանկարը», որ կատարել է Պ. Ֆ. Սուդակովը, մի նկարիչ, որ ամբողջովին սովետական տարիներին է ձևավորվել, անկասկած ռուսական սովետական ռեալիստական գեղանկարչության նվաճումներից է:

Չնայած Հայաստանի Պատկերասրահի արևմտա-եվրոպական գեղանկարչության հավաքածուի ֆրագմենտային բնույթին, վերջինս, ինչպես և ռուսական արվեստի հավաքածուն, արժեքավոր է այստեղ հավաքված ստեղծագործությունների բարձր մակարդակով: Պատկերասրահում հավաքված արևմտա-եվրոպական ավելի քան 200 նկարներից ներկա ալբոմում մտցված են տասներկու գործ՝ երկուսից-վեց նկար ամեն մի առանձին ազգային դպրոցից:

Պատկերասրահում արևմտա-եվրոպական մյուս դպրոցներից ամենից ավելի ֆրագմենտային է ներկայացված իտալական արվեստը: Ռաֆայելի և Տիցիանի ժամանակակից Գարոֆալոն (Բենվենտուո Տիգի) իբրև նկարիչ կազմավորվել է այդ մեծ նկարիչներին ուսումնասիրելու հիման վրա: «Տիրամայրը մանկան հետ» նկարում օգտագործված է տիրամոր ռաֆայելյան տիպարը, նույն նրա ութմը, նազանքը, իսկ կոլորիտով նա մոտենում է վենետիկյան դպրոցին:

XVII դարի իտալական արվեստի ռեալիստական գիծն է ներկայացնում «Մերոնու գլուխը», որ պատկանում է կարավաջիստներից մեկին՝ Զ. Լանֆրանկոյին:

XVIII դարի ամենափայլուն գեղանկարիչներից մեկին, Վենետիկի քաղաքային պեյզաժը պատկերող Ֆրանչեսկո Գվարդիին է պատկանում պոետիկ կատարված «Բակը» ոչ մեծ նկարը:

Հայաստանի Պատկերասրահն ունի Ֆլամանդական երեք ամենաականավոր գեղանկարիչների՝ Ռուբենսի, Վան-Դեյկի և Իորդանսի գործերը: «Սիլենի երթը» Ռուբենսի դիցաբանական թեմաներով կատարված տիպիկ նկարներից մեկն է: Նկարիչն ստեղծել է սիլենների, սատիրների, վալիսանալիաների մասնակցող կանանց իր ռուբենսյան աշխարհը, անտիկ դիցաբանության այս պերսոնաժներին վերամշակելով և օժտելով հրեական կենսականությամբ, համոզիչ կերպով հաղորդելով նրանց զգայական, անասնական կրքերը: Նկարը կատարված է փայլուն, ոսկե կոլորիտով:

Ռուբենսից հետո Ֆլամանդական խոշորագույն նկարիչ Վան-Դեյկին է վերագրվում «Նաչից իջեցնելը» կրոնական նկարը: Ռուբենսի առողջ, փարթամ, կոպտացած ֆիգուրաներին Վան-Դեյկի մոտ հակադրվում են նրբակազմ, մարմնի երկայն և նուրբ չափերով ֆիգուրաները: Մեծ վարպետությունը է նկարված Քրիստոսի ֆիգուրան, որը տրված է դժվար ռաֆայելի, մեռած դեմքին քարացած տանջանքով:

Ֆլամանդական երրորդ խոշոր նկարիչը՝ Յա. Իորդանսը, որ երկար տարիներ աշխատել է Ռուբենսի հետ, նրան մոտ է ինչպես իր ստեղծագործության բնույթով, այնպես էլ իր նկարների բովանդակությամբ: «Պանը և Սիրինկա» նկարում հունական դիցաբանության հերոսներն օժտված են այնպիսի գծերով, որ մոտենում են անտիկ աշխարհի ռուբենսյան հասկացողությանը, այսինքն՝ տրված են ճիշտ ֆլամանդական կենսականություն:

Բնության պատկերումը հոլանդական գեղանկարչության մեջ խոշոր տեղ է բռնում: Պատկերասրահում ներկայացված XVIII դարի հոլանդական նկարիչների աշխատանքներից ներկա ալբոմում տեղ են գտել միայն Յան Վան-Գոյենի և Կ. Դյուլարդենի պեյզաժները: Գոյենի «Դորպրեխտի տեսարանը» տիպիկ հոլանդական պեյզաժ է, որի մեջ տեղանքի հարթավայրային բնույթի շնոր-

